

Հայ Ժողովրդի պատմության Ժամանակագրություն

- 1842 Ետապենքեր** 22 Թիֆլիսում ծնվեց պատմաբան Ալեքսանդր Երիցյանը: (Վախճ. 1902թ.-ին):
դեկտեմբեր 3 Զմյուտմիայում ծնվեց լեզվագետ, թարգմանչ Մեսրոպ Նուլայրյանը: (Վախճ. 1929թ.-ին, Մարտիրոսյան):
դեկտեմբեր 3 Ծնվեց արևմտահայ վիպասանուիկի Սրբուհի Տյուսարը: (Վախճ. 1901թ.-ին):
- 1843 նայիս** 1 Կենտտիկում Միխարյանները հրատարակում են «Բազմավեպ» ամսագիրը, որը գոյատևում է մինչև օրս:
մայիս 18 Ծնվեց ամենայն հայոց կաթողիկոս Ներսես Եպիսկոպոս Աշտարակեցին: (Վախճ. 1857թ.-ին):
- օգոստոս** 6 Արդիանապոլսում ծնվեց հայ գրող-երգիծաբան, լրագրող Շակոր Պարոնյանը: (Վախճ. 1891թ.-ին):
- 1844 հունիս** 174. Պոլսում ստեղծվում է Ազգային ժողով՝ բաղկացած 16 ամիրաներից և 14 արհեստավորներից:
նոյեմբեր 13 Կովկասում հիմնվում է փոխարքություն: Առաջին փոխարքան նշանակվեց իշխան Ս. Ս. Վորոնցովը:
- 1845 հետորվար** 12 Կ. Պոլսում ծնվեց Մատթեոս Իզմիրյանը: (Վախճ. 1910թ.-ին, Էջմիածնում):
փետրվար 27 Սոսկվայում ծնվեց հրապարակախոս Գրիգոր Արծորունին: (Վախճ. 1892թ.-ին, Թիֆլիսում):
հունիս 3 Ալեքսանդրապոլսում բացվում է Հայաստանում առաջին տոնավաճարը:
- հունիս** 20 Արդուլ Մեծիդի հրամանով, Սըրի փաշան մեջ բանակով մտնում է Արևմտյան Հայաստան կիսաանկախ իշխանությունները վերացնելու հանձնարարությանը:
- օգոստոս** 16 Կալկարայում Ս. Թաղիայյանի խմբագրությամբ սկսում է հրատարակվել «Ազգասեր» շաբաթաթերթը: 1848 թ. այն վերանվանվում է «Ազգասեր Կրարատյան» և շարունակում լույս տեսնել մինչև 1852 թվականը:
- 1846 հունվար** 12 Թիֆլիսում սկսում է լույս տեսնել հայերեն «Կովկաս» շաբաթաթերթը, որը շարունակում է իր գոյությունը մինչև 1848 թվականի սկզբները:
ապրիլ 1 Կ. Պոլսում Պետրոս Միհնայյանի (նախագահ) և Սկրտիշ Պեղիկարչյանի (քարտուղար) նախաձեռնությամբ հիմնվում է նշանակած հայության համար «Համազգայաց ընկերություն»:
- հոկտեմբեր** 1 Վերաբացվում է Սկյուռարի ճեմարանը:
- դեկտեմբեր** 6 Ցարական կառավարությունը որոշում է հրապարակում, որով խաններին, թէկերին, աղալարներին և մելիքներին ճանաչում է իրու հոյի ժառանգական սեփականատերերը:
- դեկտեմբեր** 14 Անդրկովկասը վարչական նոր բաժանման է Ենթարկվում. ստեղծվում են Թիֆլիսի, Քութայիսի, Շամախու և Ղերենի նահանգները:
- 1847 մայիս** 9 Ամիրաների և արհեստավորների մասնակցությամբ Կ. Պոլսում կազմվում են Ազգային, Շոգնոր և Գերազում ժողովներ, որոնք փաստություն ապագա «Սահմանադրության» ստեղծման առաջին քայլերն էին:
- մայիս** 9 Գումարվեց Անդրկովկասի հայկական կոմիտեի պատգամափորների բարձր մակարդակի ժողովը:
- մայիս** 12 Բեղեր-խան թէյի պաշարումը:
- Օրագ բերդում:**
հունիս 17 Վիեննայում Միխարյանները հրատարակում են «Եվրոպա» շաբաթաթերթը, ապա կիսամյա հանդեսը:
- հունիս** 1 Բեղյանում ծնվեց գերմանացի հայագետ Յենիկը Գելցերը: (Վախճ. 1906թ.-ին):
- 1848 մարտ** 10 Խոշաբի կիսամյա վշանության վերացումը:
- ապրիլ** 2 Անհետացակ Խաչատրու Արովյանը: (Ծնվ. 1809թ.-ին):
- մայիս** 10 Մոսկվայի Լազարյան ճեմարանը

Վերածվում է Արևելյան լեզուների հնատիտուտի:
հունիս 13 Վերացվում է Մարաշի փաշայությունը և այն դառնում է Աղանյի վիլայեթի մեջ գտնվող նի սանցակ:

հոկտեմբեր 9 Կ. Պոլսում ծնվեց գրական, հասարակական-քաղաքական գործիչ Մկրտիչ Փորտուգալյանը: (Վախճ. 1921թ.-ին):

1849 ապրիլ 27 Փաղիզում ստվորող արևմտահայ ուսանողները կազմում են «Արարատյան ընկերությունը»:

հունիս 9 Կազմվում է Երևանի նահանգը, որի մեջ մտնում էին Երևանի, Նախիջևանի, Ալեքսանդրապոլի, Նոր Բայազետի ու Օրորությի գավառները:

հունիս 13 Գրիգոր Գալստյանի խմբագրությամբ Սինգապորում սկսում է հրատարակվել «Ուսումնասեր» կիսամյա լրագիրը, որը շարունակում է լույս տեսնել մինչև 1853 թվականը:

դեկտեմբեր 27 Կ. Պոլսում ծնվեց մեծահամբավ դերասան Պետրոս Աղամյանը: (Վախճ. 1891թ.-ին):

1850 հունվար 2 Երևանի պետական իգական առաջին (Դիմիսիմյան) դպրոցի բացումը:

ապրիլ 13 Ծնվեց արևմտահայ առաջին կոնվոկատորներից և դիրիժորներից մեկը՝ Կարապետ Փափայանը:

հունիս 29 Թիֆլիսում հիմնադրվեց ռուսական աշխարհագրական ընկերության Կովկասյան բաժանունը:

1850 սեպտեմբեր 1 Թիֆլիսում սկսում է հրատարակվել «Արարատ» շաբաթաթերթը՝ Գաբրիել Պատկանյանի խմբագրությամբ:

1851 հունվար 6 Կ. Պոլսի Սկյուռար թաղանասում ծնվեց Պետրոս Պուրյանը: (Վախճ. 1872թ.-ին):

մայիս 12 Եւյրունի իշխանները էջմիածնի կարողիկոսին գրում են, որ Արդուլ Մեծիդի իրենց կանչել է Կ. Պոլսի և պայմանագիր ստորագրել՝ հարկը կանոնավոր վճարելու մասին: Փաստորեն չեղալ էր հայտարարվել Մուրադ IV-ի տված հրովարտակը:

նոյեմբեր 8 Թիֆլիսում բացվեց ճարտարապետ Գաբրիել Թամամշյանի հայոց թատրոնը, որը գործեց մինչև 1874 թ. հոկտեմբերը:

դեկտեմբեր 21 Թուրքիայի Սամսոն թաղարում ծնվեց գրող և հրապարակախոս Արփիար Արփիարյանը (Վախճ. 1908թ. փետրվարի 12-ին, Կահիրենի):

1852 փետրվար 2 Կ. Պոլսում Կարապետ Ութունյանի խմբագրությամբ լույս է տեսնում «Սասին» պարբերականը, որը «Հայաստանի» շարունակությունն էր և որոշ ընդհատումներով հրատարակվեց մինչև 1908 թվականը:

հունիս 3 Կ. Պոլսի Խասպյուտ արվածանուն ծնվեց ուսուցիչ, հրապարակախոս և թաղաքական գործիչ Միհան Զերասպը: (Վախճ. 1929թ.-ին, Մարտունյան):

1853 փետրվար 18 Ղրիմի լարասուրազարում ծնվեց հայ կոմպոզիտոր, խմբավար, երաժիշտ և բանահավաք Թիստափոր Կարա Մուրզան: (Վախճ. 1902թ.-ին):

մարտ 22 Կ. Մարքսը գրում է «Ազգությունները Թուրքիայում» հոդվածը, որտեղ տեսնում է «Սասին» պարբերականը, որը «Հայաստանի» շարունակությունն էր և որոշ ընդհատումներով հրատարակվեց մինչև 1908 թվականը:

հոկտեմբեր 4 Ղրիմի (կամ Արևելյան) 30 ամիս տևողությամբ պատերազմը:

հոկտեմբեր 21 Կ. Պոլսում, Ն. Ռուսինյանի նախագահությամբ և Գ. Օսյանի, Ն. Պալյանի անդամակցությամբ ստեղծվում է «Ուսումնական խորհուրդը»:

հոկտեմբեր 30 Ակսվում են պատերազմական գործողություններ Ղրիմի պատերազմի Կովկասյան ռազմականություն:

նոյեմբեր 18 Մինոպի ճակատամարտը:

նոյեմբեր 19 Բաշ-Քաղըկլարի ճակատամարտը:

դեկտեմբեր 4 Ցարական կառավարությունը:

Լուրեր Իրանահայ համայնք

Եկեղեցական զգեստների եւ սպասքի ցուցահանդես Նոր Զուղայում

ԵՐԵՎԱՆ - Սբ Աստվածածին վանքի զանգակատան գավիթի մոտ ցուցահանդեսի բացման ժապավենը կտրելուց առաջ Սպահանի թեմի առաջնորդ տեղ Շահան ծ. Վարդապետ Սարգսյանը շնորհավորել է այն գեղեցիկ նախաձեռնության հրագործման կապակցությամբ:

Սահմանի 28-ից մինչեւ հունիսի 10-ը կայանալիք ցուցահանդեսում տեղ են գտել ավելի քան 100 պատմական արժեք ունեցող Եկեղեցական սպասք ու զգեստներ:

Ցուցահանդեսի բացմանը Ներկա են եղել Սպահանի հայոց թեմի պատգամավորական ժողովի, կրոնական եւ թեմական խորհուրդների, կազմակերպիչ Ենթահանձնախմբերի անդամներ, ազգային գործիչներ, ինչպես նաև հայ հասարակությունը:

Իրան

ԻՐԱՆԸ ՊԱՏՐԱՍՏ Է ԱԶԱԿՑԵԼՈՒ ԿԱՐԳԱԿՈՐՄԱՆԸ

ԵՐԵՎԱՆ, ԱՐՄԵՆՊՐԵՍ:
 «Մենք կարծում ենք, որ դարաբաղյան հակամարտությունը պետք է կարգավորվի խաղաղ ճանապարհով: Գտնում ենք, որ պետք է շարունակվեն շփումները երկու երկրների դեկավարների միջեւ, նաև միջազգային կառույցների շրջանակներում շարունակվեն ջանքերը խնդրի խաղաղ կարգավորման ուղղությամբ, որը կերաշխավորի խաղաղությունը եւ կայունությունը տարածաշրջանում, ինչպես նաև խաղաղ գոյակցության պայմաններ կստեղծի երկու երկրների ժողովուրդների եւ տարածաշրջանի երկրների ժողովուրդների համար», այսօր ասաց ՀՀ-ում իրանի հայամական Յանրապետության նորանշանակ դեսպան Ալիքեզա Յանիիհանը՝ ի պատասխան Արմենարեսի թղթակցի այն հարցի, թե Իրանը որպես տարածաշրջանային պետություն, կարող է որեւէ կերպ աշակցել խնդրի խաղաղ կարգավորմանը:

«Միաժամանակ, մենք համագործակցում ենք ԵԱՀԿ Մինսկի խմբի հետ եւ պատրաստ ենք ցանկացած աշակցություն ցուցաբերել կողմերին՝ խնդրի խաղաղ կարգավորման համար», նշեց դեսպանը:



Հայաստան

Սեւանի մակարդակը բարձրացել է 1 մետր 16 սմ-ով

ԵՐԵՎԱՆ - ՀՀ բնապահպանության նախարար Վյազյանը այսօր «Արմենպրես» մամուլի սրահում կայացած ասուլիսում ներկայացրեց բնապահպանության նախարարության 2004 թվականի գործունեությունը:

Նախարարը տեղեկացրեց, որ այս տարվա ընթացքում ընդունվել եւ ընթացքի մեջ է բնապահպանության ոլորտին վերաբերող 7 օրենք: Նա կարեւորեց հատկապես «Թափոնների մասին» ՀՀ օրենքի նախագիծը: Ինչ վերաբերում է Յայաստանի ընդերքի օգտագործմանը ու պահպանմանը, այս 2003 թվականի ընթացքում նախարարության բնապահպանական պետական տեսչության կողմից 221 գործող հանքավայրերում անցկացվել են ստուգումներ, պարզվել ե, որ դրանցից 33-ը շահագործվել են ապօրինաբար: Ըստ նախարարության տվյալների՝ 23 գործ ներկայացվել է դատախազություն: Վ. Այվազյանը կարեւորեց նաև այն միջոցառումները, որ իրականացվել են Սեւանա լճի մակարդակի բարձրացման ուղղությամբ: «Սեւանա լճի մակարդակի անկման վերաբերյալ մշտական ահազանգեր են եղել, եւ պետք է արձանագրել, որ 2001-2004 թվականների ընթացքում լճի մակարդակը բարձրացել է 1 մետր 16 սմ-ով՝ հասնելով 1993 թվականի ցուցանիշին», - ասաց նախարար՝ նկատելով, որ այս արդյունքի պատճառն այն է, որ 1998 թվականից ՀՀ նախագահի եւ Կառավարության որոշումներով գալիքորեն նվազեցվել են հերգետիկ նպատակներով օգտագործվող ջրի ծավալները:

Երեկ ՀՀ կառավարության որոշմամբ Յայաստանում նույնական հունիսի 5-ը ընդունվել է որպես «Բնապահպանի օր»: Վ. Այվազյանը ներկայացրեց բնապահպանական միջոցառումների մի ցանկ: Դրանք տեղի են ունենալու Յայաստանի տարբեր մարզերում հունիսի 4-17-ը ընկած ժամանակահատվում:

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՐԵՔ ՈՒՂՈՌՈՒԹՅՈՒՆ

Յայաստանի արտգործնախարարը ԵՊՀ ուսանողների հետ հանդիպման ժամանակ ասաց, որ Յայաստանի արտաքին քաղաքականության օրակարգի մաս է կազմում Յայոց ցեղասպանության ճանաչումը: Ըստ Օսկանյանի, ցեղասպանությունը ճանաչելու հարցում Յայաստանն աշխատում է երեք ուղղությամբ: Առաջին՝ Երկրորդ, երրորդ առանձին երկրներ կամ խորհրդարաններ ճանաչում են 1915 թ. ցեղասպանությունը, երկրորդ՝ միջազգային կազմակերպություններ, եւ երրորդ՝

Հոգու Կրկնարարական թերթ

ցեղասպանության ճանաչումը Թուրքիայի կողմից:
Արտգործնախարարը նշեց, որ այսօր Թուրքիայում ցեղասպանության հարցի ըննարկումների վրա արդեն տարու չկա, եւ թուրքական հասարակությունն ավելի ազատ է այս հարցում, ճիշտ է՝ Յայոց ցեղասպանության ժմանակակից մասին:

Յայաստանին կտրամադրվի մինչեւ 220 մլն դոլարի օժանդակություն

ԵՐԵՎԱՆ. Յամաշխարհային բանկի տևորենների խորհուրդը քննարկել է հաստատել է «Երկրի օժանդակության ռազմավարության ծրագրը», որի շրջանակներում 2005-2008թթ. Յայաստանին կտրամադրվի մինչեւ 220 մլն դոլարի օժանդակություն: Ինչպես նշեց ՔԲ-ի հայաստանյան գրասենյակի արտաքին կապերի պատասխանատու Վիգեն Սարգսյանը, Երկրի ռազմավարությունը հիմնվում է Երեք տարբերակի վրա. առաջ տարբերակը ենթադրում է 90 մլն դոլարի օժանդակություն, Երկրորդը՝ 170 մլն դոլար, Երրորդ՝ բարձր տարբերակի դեպքում օժանդակությունը հասնում է մինչեւ 220 մլն դոլարի: Ըստ Վ. Սարգսյանի՝ Միջազգային զարգացման ընկերակցության գնահատմամբ, 2003թ. արդյունքներով մեր Երկրի կատարողականը եղել է լավագույնը:

Յուլիսի 1-ից նոր քառամյա շրջանին անցնելիս մակրոտնտեսական ցուցանիշների աճը, բարեփոխումների ընթացքը հարավորություն կտան Յայաստանին անցնել բարձր տարբերակին: Սակայն Յայաստանը կառավարման առումով դեռևս բարեփոխումների եւ բարելավումների խնդիրներ ունի:

Ստեղծվել է համահայկական լրատվական կայքեց

ԵՐԵՎԱՆ - Յայաստան-Սփյուռք տեղեկատվական առաջին համաժողովում ընդունված որոշման համաձայն ստեղծվել է համահայկական լրատվական կայքեց: Եվրոպայի հայկական միությունների ֆորումի, «Նոյյան Տապան» լրատվական գործակալության եւ «Արմենակոր» հեռուստատեսության համագործակցությամբ ստեղծված Mediaforum.am կայքեցին կարելի է ծանոթանալ 4 լեզուներով՝ արեւմտահայերեն, արեւելահայերեն, ռուսերեն, անգլերեն:

Այն տեղեկություններ է պարունակում աշխարհում գործող շուրջ 400 անուն հայկական լրատվամիջոցների վերաբերյալ, ներկայացնում է «Յայերն այսօր» տեղեկագիրը, որը պատմում է Յայաստանի եւ Սփյուռքի տարբեր համայնքների, ինչպես նաև հայկական լրատվամիջոցների առաջին ֆորումի մասին: Կայքեցը ընթերցողին հարավորություն է տալիս այս կամ այս հարցի վերաբերյալ իր կարծիքն ու տեսակետները գետեղել, հաղորդակցվել ու կապ հաստատել տարբեր Երկրներում գործող լրատվամիջոցների հետ: Կայքեցի հիմնադիրներն այսօր նաև տեղեկացրեցին, որ համահայկական տեղեկատվական Երկրորդ համաժողովը տեղի է ունենալու հոկտեմբերի 8-10-ը:

Քննարկվելու է Երեք խնդիր՝ լրատվամիջոցների անելիքները Յեղասպանության 90-ամյակի Եւ Ղարաբաղյան խնդիր առումով, Յայաստանը՝ որպես Ներդումային բարենապատ Երկիր Ներկայացնելու ուղղությամբ կատարվելիք քայլերը, Յայաստան-Սփյուռք ֆորումի իրավակազմակերպչական կարգավիճակի հստակեցումը:

Արցախ

ՄԵՐԺ ՍԱՐԳԱՅԱՆ. ՄԵՆՔ ՄՏԱԴԻՐ ՉԵՆՔ ՃԵՂՎԵԼ ԱՅՆ ՈՒՂՈՒՑ, ՈՐՈՎ ԱՐԴԵՆ ՎԱՂՈՒՑ ԸՆԹԱՆՈՒՄ ԵՆՔ

ԱՄԵՓԱՆԱԿԵՐԾ, ԱՐՄԻՆՖՈ:

«Մենք մտադիր չենք շեղվել այն ուղղուց, որով արդեն վաղուց ընթանում ենք», այսօր Ստեփանակերտում հայտարարել է Յայաստանի պաշտպանության նախարար Սերժ Սարգսյանը, որը մասնակցում է Լեռնային Ղարաբաղի Յանրապետության անկախության 13-րդ տարեդարձին Նվիրված հասդիսություններին: Սերժ



ARMENPRESS

Սարգսյանը հիշեցրել է 3 սկզբունքները, որոնք հոչակել են Յայաստանի նախագահ Ռոբերտ Զոշարյանը. Լեռնային Ղարաբաղի կարգավիճամբ Աղրեջանց դուրս, Յայաստանի հետ ցամաքային սահմանի առկայությունը եւ անվտանգության հուսալի Երաշխիքներ: «Այդ սկզբունքների հիման վրա ել պետք է ձեռք բերվի ղարաբաղյան խնդիրի վերջնական լուծումը», հայտարարել է Յայաստանի պաշտպանության նախարարը: Սերժ Սարգսյանը չի բացառում, որ կգա ժամանակը, եւ կստեղծվի համապատասխան իրավիճակ, Երբ Լեռնային Ղարաբաղը կմիանա Յայաստանին: «1988 թվականին հենց մայր Յայաստանի հետ վերամիավորման պահանջից սկսեց ղարաբաղյան շարժումը», նշել է Յայաստանի պաշտպանական գերատեսչության դեկավարը:

Աղրեջանից տեղահանված հայերը չեն ուզում վերադառնալ

ԵՐԵՎԱՆ - Ազգային ժողովում ԵՎՀԿ ԽՎ Նախագահի հատուկ ներկայացուցիչ Գյորան Լենմարկերի հետ այսօր կայացած հանդիպումներին ներկա է Եղել նաև Կառավարության առընթեր միգրացիայի եւ փախստականների վարչության պետ Գագիկ Եգանյանը, որը հյուրին մանրամասն ներկայացրել է 1988-92 թթ. Աղրեջանից Յայաստան բռնի տեղահանված 360000 հայ փախստականների իրավական եւ սոցիալական վիճակը՝ նշելով, որ Աղրեջանից բռնագաղթված շուրջ 65000 փախստական ՅՅ քաղաքացիություն են ստացել: Կառավարությունն իրականացնում է նպատակային սոցիալ-տնտեսական քաղաքականություն, փախստականների հարցը ներառված է աղքատության նվազեցման ռազմավարական ծրագրում: Յանրային

Նշանակության շենքերում ապրող 3470 ընտանիքներին բնակարաններով ապահովելու ծրագիր է իրականացվում, որի արժեքը 18 մլն ԱՄՆ դոլար է. 5մլն ԱՄՆ դոլարը հատկացվելու է բյուջետային միջոցներից: Պատասխանելով իյուրի հարցին՝ Գ. Եզանյանը նշեց, որ Աղրբեջանի մեծ քաղաքներից տեղահանված հայերը չեն ուզում վերադառնալ իրենց բնակավայրեր, քանի որ համոզված չեն իրենց անվտանգության ապահովման մեջ, իսկ Դաշտային Ղարաբաղից տեղահանվածները, որոնց թիվը հասնում է 50000-ի, երազում են օր առաջ վերադառնալ իրենց հայրենիք: Գ. Եզանյանը փախստականների հիմնախնդիրներին եւ իրականացվող ծրագրերին վերաբերող փաստաթղթերի փաթեթը փոխանցեց Լենմարկերին:

Հայոց Սփյուռք

Մելգոնյանցիներն ուսումը կշարունակեն այլ դպրոցներում

ԵՐԵՎԱՆ - Հայկական բարեգործական ընդհանուր միությունը (ՀԲԸՄ) պայմաններ կստեղծի Կիպրոսի «Մելգոնյան» վարժարանի սաների ուսումն այլ կրթօջախներում շարունակելու համար: Ինչպես «Արմենպետի» թթակցին հայտնել է ՀԲԸՄ-ի հայաստանյան Ներկայացուցության տնօրեն Աշոտ Ղազարյանը, գլխավոր վարչության կողմից քննարկվել է հաստատության սաների կրթությունը շարունակելու հարցը: Լիբանանում միության հովանավորությամբ գործող 3 դպրոցներ պատրաստ են ընդունել այդ երկրից վարժարան հաճախող սաներին: Հայաստանից հաճախող աշակերտների մի մասն այս տարի կավարտի ուսումը, իսկ մյուս մասը կտեղափոխվի Հայաստան: ՀԲԸՄ-ն ծրագրում է Կիպրոսում հիմնել «Մելգոնյան միջնակարգ դպրոց», քանի որ այստեղ գործում է 3 հայկական նախակրթարան:

Ա. Ղազարյանի կարծիքով՝ փակման որոշումը կայացվել է, որովհետեւ վարժարանը՝ Սփյուռքի հայ գիտական մտքի երեմնի դարբնոցը, չի կատարում իր առաքելությունն այսքանով, որքանով վարչությունն է ակնկալում:

«Վարժարանի յուրաքանչյուր աշակերտի ճակատագիրը կարեւոր է մեզ համար: Նրանց համար կարող ենք դպրոցներ բացել իրենց երկրներում: Եթե ուզում ենք նրանց հայոց լեզու, հայոց պատմություն սովորեցնել, ավելի լավ կլինի նրանց բերել Հայաստան», - նշում է Ա. Ղազարյանը: Հայաստանյան ներկայացուցության տնօրենը նկատում է, որ հաստատության շրջանավարտները ստացած կրթությամբ չեն կարող ուսումն շարունակել իրենց երկրի բուհերում, քանի որ վարժարանում դասավանդում են անօլիկական դպրոցների ծրագրերով: Խսկ շրջանավարտներից ոչ բոլորը կարող են ուսումն շարունակել ԱՄՆ-ում կամ Անգլիայում: Բացի այդ, աշակերտների թիվը վերջին տարիներին զգալիորեն նվազել էր: Ինչպես ներկայացված է ՀԲԸՄ հաշվետվության մեջ, 2003 թվականի աշնան այստեղ սովորել է 206 ուսանող, մինչդեռ վարժարանը կարող է ընդունել 400 հոգու: ՀԲԸՄ գլխավոր վարչությունը որոշել է «Մելգոնյան» վարժարանի գործունեությունը դադարեցնել 2005-ի հունիսից:

Սիօնագոյին

Համաձայն Երեխաների դրության մասին ՄԱԿ-ի հաշվետվության՝

Աղրբեջանը գտնվում է 46-րդ տեղում Բազում արշավանդներում: 2003 թվականին Երեխաների դրության մասին ՄԱԿ-ի հաշվետվության մեջ Աղրբեջանը գտնվում է 46-րդ տեղում. այս մասին Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մամուլի ասուլիսում հաղորդել է Երեխաների իրավունքների պաշտպանության լիգայի նախագահ Յուսիֆ Բեկիրովը: ԱՊՀ-ի Երկրների մեջ դա ամենացածր եւ վատթար ցուցանիշն է: 1999 թվականի հաշվետվության մեջ Աղրբեջանը գտնվում էր 81-րդ տեղում, իսկ 2002 թվականին իշել էր 48-րդ տեղը: Անցած տարվա հաշվետվության մեջ Յայաստանը գտնվում է 93-րդ, Վրաստանը՝ 102-րդ տեղում:

Հասարակական

ԻՆՉՈ՞Վ ԱՇԳԵՐԻ ԼԻԳԱՆ ԶՃԱՆԱՇԵՑ 1918-20

ԹԹ. ԱՂՐԲԵՋԱՆԻ ԴԵՄՈԿՐԱՏԱԿԱՆ
ՀԱՍՏԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Բարվում նշվեց Աղրբեջանի անկախության հոչակագրի 13-րդ տարեդարձը

Հայաստանի իշխանությունները վերջին տարիներին տարբեր ամբիոններից բազմից հայտարարել են, որ Լեռնային Ղարաբաղը երեք չի եղել անկախ Աղրբեջանի կազմում: Յունիսի 24-ին Եվրոխորհրդի իր ելույթում նախագահ Թոշարյան ասաց. «Խորհրդային Միության վկացման արդյունքում Խորհրդային Աղրբեջանի տարածքում կազմավորվեցին 2 անկախ պետություններ՝ Լեռնային Ղարաբաղը եւ Աղրբեջանը: Վյո պետությունների գոյության իրավական հիմքերը նույնական են: Այսինքն՝ Աղրբեջանի տարածքային ամբողջականությունը Լեռնային Ղարաբաղի հետ ոչ մի ընդհանուր բան չունի»:

Յուրաքանչյուր պատմություն ունի մեկնաբանման առնվազն երկու տարբերակ: Օրինակ, հայերս համոզված ենք, որ Լախչեանը բնիկ հայկական հող է, միևնույն աղրբեջանցիները հակառակը՝ նոյն համոզվածությամբ պնդում են, որ ոչ միայն Լախչեան է աղրբեջանական, այլև Զանգեզուրն ու Երեւանը: Նոյնը կարող ենք ասել Ղարաբաղի մասին: Բայց որ Ղարաբաղը չի եղել անկախ Աղրբեջանի կազմում, սա արդեն փաստ է, ընդ որում ըստ պատմության աղրբեջանական տարբերակի:

Երեկ Բարվում նշեցին «Աղրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման» հոչակագրի 13-րդ տարեդարձը: 1991 թ. օգոստոսի 30-ին Բարվի կոմունիստական իշխանությունները ընդունեցին վերոնշյալ փաստաթուղթը, որը չափազանց կարեւոր է ոչ միայն Աղրբեջանի, այլև Ղարաբաղի համար: Ըստ այդ հոչակագրի, Աղրբեջանը իր անկախությունը հռչակեց 1918-20 թթ. Աղրբեջանի Դեմոկրատական Հայաստանի պատմության (ԱՊՀ) սահմաններում: Վյո տարիներին

Հոգևոր Արքայի արքայություն

Դարաբաղը չի եղել Ադրբեջանի կազմում: Այսինքն՝ եթե մեր օրերի Ադրբեջանը ԱԴՀ-ի իրավահաջորդն է, ինչպես նշվում է հռչակագրում, ապա նշանակում է Բաքուն Դարաբաղի Նկատմամբ որեւէ հավակնություն ունենալ չի կարող: Միայն 1921 թ. հուլիսի 5-ի որոշումով Յայաստանի մի հատվածը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին:

1918-20 թթ. ԱԴՀ մաս չի կազմել ոչ միայն Դարաբաղը, այլև Նախիջեւանն ու Դաշտային Դարաբաղը: Միայն 1921 թ. գարնանը Նախիջեւանը Կարսի պայմանագրով դրվեց Ադրբեջանի խնամակալության տակ: Իսկ Դաշտային Դարաբաղը մաս-մաս կցվել էր Ադրբեջանին մի քանի տարիների ընթացքում: Ուշագրավ մի փաստ. Ազգերի լիգան, որը ՄԱԿ-ի իրավանախորդն էր, չճանաչեց ԱԴՀ-ն՝ պատճառաբանելով հարեւանների հետ ունեցած տարածքային վեճերը, ավելի ստույգ՝ Նախիջեւանի եւ Դարաբաղի խնդիրը:

Բաքվի պետհամալսարանի պատմության դրկուր Զամիլ Յասանովը գրում է, որ 1919 թ. հունվարին ադրբեջանական պատվիրակությունը՝ Փարիզի հաշտության կոնֆերանսին մասնակցելու էր մեկնել մի շարք անկալիքներով, մասնավորապես Բաքուն փորձում էր Ազգերի լիգային խնդրել, որ Վերջինս ճանաչի ԱԴՀ-ի անկախությունը, ընդունի Ազգերի լիգայի կազմում: Ըստ Յասանովի, Բաքվի պատվիրակությունը հույս ուներ ԱՄՆ նախագահ Վիլսոնի աշակցությունն ստանալ եւ հնարավորության դեպքում ԱԴՀ-ի ու ԱՄՆ-ի միջեւ հաստատել դիվանագիտական հարաբերություններ: Յասանովը գրում է, որ չնայած Վիլսոնի Ենթադրյալ աշակցությանը, Ադրբեջանի անկախության ճանաչման եւ Ազգերի լիգային անդամակցելու հարցը 1919 թ. Փարիզի կոնֆերանսում չլուծվեց:

Ի դեպ, ԱԴՀ-ն իր գոյության երկու տարիների ընթացքում այդպես էլ չկարողացավ անդամակցել Ազգերի լիգային՝ ի տարբերություն հարեւան Յայաստանի եւ Վրաստանի: Փաստորեն, ԱԴՀ-ն պատմական թատրոբանից հեռացավ, ավելի ստույգ՝ դարձավ խորհրդային եւ հետագայում մաս կազմեց 13 տարի առաջ փլուզված ԽՍՀՄ-ին, չկարողանալով դառնալ Ազգերի լիգայի անդամ: Այսինքն՝ այդ պետությունը միջազգայնորեն չճանաչվեց, քանի որ փորձում էր Ազգերի լիգայի անդամ դառնալ իրեն չպատկանող Դարաբաղով եւ Նախիջեւանով:

Դարաբաղը չի եղել ԱԴՀ-ի կազմում. բերենք այլ օրինակներ: 1920 թ. ապրիլի 29-ին, Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատելու հաջորդ օրը, արտաքին գործերի կոմիսար Յուսենովը Յայաստանի դաշնական կառավարությանը (Յայաստանը խորհրդայնացվեց նույն տարվա դեկտեմբերի 2-ին) հղեց նոտա. «Ադրբեջանի Խորհրդային Յանրապետության բանվորայուղացիական կառավարությունը՝ հանձին հեղափոխական կոմիտեի, պահանջում է ամենից առաջ ձեր գործերից մաքրել Դարաբաղի եւ Զանգեզուրի տարածքը»: Սա եւս մեկ փաստ է, որևէ ապացուցում է, որ անգամ խորհրդային դառնալու առաջին շրջանում Դարաբաղը չի եղել Ադրբեջանի կազմում, այլապես

Բաքուն նման նոտա չէր հիմ: Եթե Նախատում եք՝ Յուսենովի նոտայի մեջ չի նշվում Նախիջեւանի անունն ընդհանրապես: Պատճառն այն է, որ Նախիջեւան այդ տարիներին անկախ Յայաստանի մասն եր Ադրբեջանին բռնակցվեց Միայն 1921 թ. գարնանը:

1920 թ. օգոստոսի 10-ին Յայաստանի դաշնակցական կառավարության եւ Ռուսաստանի միջեւ ստորագրվեց համաձայնագիր, որի երկրորդ կետում ասվում էր. «Ռուսական գործերի կողմից գրավվում են Վիճելի մարզերը՝ Դարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը, բացառությամբ այն շերտի, որը սույն պայմանագրով որոշված է Յայաստանի Յանրապետության գործերի տեղակայման համար»:

Եվ վերջապես, 1920 թ. նոյեմբերի 30-ին Խորհրդային Ադրբեջանի հեղկոմի նախագահ Նարիմանովի եւ արտաքին գործերի ժողովում հայտարարվեց Յայաստանի հեղկոմին ուղղված պաշտոնական ուղերձում ասվում էր, որ «Լեռնային Դարաբաղը, Զանգեզուրը եւ Նախիջեւանը ճանաչվում են Խորհրդային Յայաստանի բաղկացուցիչ մաս»:

ԹԱԹՈՒ ՀԱԿՈԲՅԱՆ

Մշակութային

ԳՈՒՅԵ ԳԱԼԻՍ ԵՒ ՃԵՄԱՐԻՏ
ԺԱՄԱՆԱԿՆԵՐ



ԹԵՐԵՅԱՆ ԿԵՆՏՐՈՆՈՒՄ ՄԵԺԱՐՎԵց ԿԱՐԼԵՆ
ԴԱԼԼԱՐՅԱՆԾ

Թերեյան կենտրոնում մեժարվեց բանասիրական գիտությունների դոկտոր, հասարակական-քաղաքական գործիչ Կարլեն Դալլարյանը, մարդ, որի անունը լավ ծանոթ է ամբողջ հայությանը: Եթե գրականության մարդիկ Կարլեն Դալլարյանին իրենցն են համարում (Ես դրա հրավունքն ունեմ), ապա քաղաքական գործիչները նույնականացնելու արդարացի են, երբ անցած տարի 60-80-ական թվականների քաղաքական դաշտից առանձնացնում են Դալլարյանին, ով առավելագույնս արդարամիտ ու հայանպատճեն գործունեություն ծավալեց՝ լինելով Յայաստանի կոմիտսի պրոպագանդայի եւ ագիտացիայի բաժնի վարիչի պատուում, կոմիտսի կենտրոնի քարտուղար՝ գաղափարախոսության գծով պատասխանատու, դեկանակարել է այնպիսի բարդ կառույց,

Հոգևորականութեաբ

որպիսին սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեն է, զբաղվել սփյուռքի, մասնավորապես նաեւ Ռամկավար ազատական կուսակցության պատմությամբ:

Բարդ, բայց անխոտորելի ճանապարհ է անցել Կարլեն Դալլարյանը: Եվ երբ այսօր Նրա մասին գովեստի խոսքեր են ասում եւ պատմաբանները, եւ քաղաքական գործիչները, եւ գրողները, ապա դա վկայություն է այն բանի, որ 75-ամյա մարդն այսօր պարզ ճակատով է նայում մարդկանց, որովհետեւ իր արածը փրկության գործ է եղել՝ հայոց պատմության, հայ մշակույթի, հայոց պետականության, հայ մարդու փրկության գործ:

Չորեյարին ուղղված իր խոսքում Սիլվա Կապուտիկյանը գրել է. «Յավում եմ, որ հնարավորություն չունեմ ներկա լինելու եւ անձամբ շնորհավորելու քո վաստակաշատ 75-ամյակը: Չատ քիչ է պատահում, որ պաշտոնական մարմիններում աշխատող մարդ՝ պաշտոնաթողությունից հետո այսքան հարգանք ու մեծարանք է վայելում հասարակության մեջ: Դու այդ «քիչ պատահողներից» ես: Որտեղ էլ եղար դու, ինչ գործ որ արեցիր, միշտ հավատարիմ մնացիր քո ներքին ծայսին, քո ներաշխարիին, որտեղ ներդաշնակված էին հայրենի ժողովրդի հանդեպ ունեցած սերը եւ նրան խելամտորեն ծառայելու պատասխանատվությունը»:

Լառնակայից ուղարկած հեռագրում Ռամկավար ազատական կուսակցության վետերան դեկավար Յայկաշեն Ուզունյանը, իհշատակելով տարիներ առաջ իրենց մտերմությունը, գրում է. «...Որքան ալ դուք գտնուեցաք հայրենական քաղաքական բարձրագույն մակարդակի վրայ թէ պատասխանատու այլ պաշտոններու դիրքերուն, պահեցիք մեզի հետ Ձեր յարաբերութեանց շերմութիւնը ազնուական ողջամտութեամբ մը: Այդ է, որ մենք կոցանք բարձրօրեն գնահատել հայ կոմունիստին մեջ հայ ոգիին տիրապետութիւնը ի նպաստ հայ ժողովուրդի հիմնական շահերուն: Դարձեալ Ձեր գրական ու ազգային քաղաքական հասկացողութեամբ հայրենի ժողովուրդը ճանչցաւ դարձու հայ մեծ ռամկավարին՝ Արշակ Զօպանեանին նուիրումը ոչ միայն ծանօթացնելու հայ գրականութիւնն ու մատենագիտութիւնը միջազգային մշակութային կերպուներուն, այլեւ մանաւանդ շահելու անոնց անխառն բարեկամութիւնը ի նպաստ հայ դատի յաջողութեան ճիգերուն, դեմքեր՝ որոնք միջազգային քաղաքական ու մշակութային բեմերու վրայ եղած էին իրապես մեծ ու անկեղծ բարեկամներ, շնորհիւ Զօպանեանի մշակած յարաբերութեանց»:

Ռամկավար ազատական կուսակցութեան կենտրոնական վարչության համանախագահ Երվանդ Ազատյանի հեռագրում ասված էր. «Յամայս սփիւռքի սիրոյ շերմութեամբ կ'ողջունեմ Կարլեն Դալլարյանի յորելեանական տօնը: Մեծարեալին կեանքն ու գործը պատմարժեք նշանակութիւն ունին մեր ժամանակներու կեանքին մեջ: Իբրեւ պետական մտածողութեան տեր խոհական անձնաւորութիւն, իբրեւ պատմաբան, իբրեւ ազիսի հայ, ան արժանի է այս յապահած մեծարարակիւն:

Սովետական տարիներուն, երբ բազմաթիւ այրեր արուեստական յենակներով կը տիրանային դեկավար

պաշտօններու, Կարլեն Դալլարյան բարձրացաւ շնորհիւ իր տոկուս արժանիքներուն եւ ուժեղ անհատականութեան: Եւ իր պաշտօնավարութիւնն ի սպաս դրաւ գերազանցապես ժողովուրդի օգտին:

Ցուրտ պատերազմը ժամանակ մըն էր, երբ հայրենիք-սփիւռք յարաբերութեանց կամուրջները քանիցու ամէն քաղաքական պատճառ կար, սակայն, շնորհիւ Դալլարյաններու այդ կապը ամուր մնաց մեր ժողովուրդի զոյգ հատուածներուն միշեւ ու եթէ այսօր մենք յաւակնութիւնն ունինք մէկ ազգ, մէկ մշակոյթ, մէկ հայրենիք լոգունգներով ոգեւորուելու, ասոր մէջ կենսական է դերը Կարլեն Դալլարյաններուն:

Ծորդիիւ իր խորաթափականց հմտութեան ու դեկավարութեան, սփիւռքագիտութիւնը լուրջ ուսման հանգամանք ստացաւ Յայաստանի մէջ, իսկ Ռամկավար ազատական կուսակցութիւնը ունեցաւ իր պատմութեան առաջին հատորը: ՈՎԿ-ի շարքերը յատկապես երախտապարտ են պրո Դալլարյանին իր վերլուծական լուրջ աշխատանքին համար, որուն շնորհիւ պատմութեան համար փրկուեցաւ կարեւոր հատուած մը կուսակցութեան կեանքին»:

Յանդիսության ժամանակ Յայաստանի թեքեան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը, վերիիշելով տարիներ առաջ Մուկվայում Մարտիրոս Սարյանի մեծարման երեկոն, նշեց, որ այդ հանդիսության բանախոս Կարլեն Դալլարյանն իր փայլուն ելույթով պարզապես շշմեցրել էր ոչ միայն դահլիճում գտնվողներին, այլեւ բազմամիլիոն հեռուստադիտողներին: «...Բանախոսն սկսեց այսպես. «Վեւ, օ, դու արեւ, դու ես ամենամեծ արժեքը, մեծագույն Մարտիրոս Սարյան»: Դահլիճը կարծես շիկացավ: Կարլեն Դալլարյանը, որն իր մեծագույն ընդունակությունների, զարգացման, լեզուների փայլուն իմացության, հետորական անկրկնելի ծիրքի շնորհիվ իրապես երեւույթ էր, համազգային երեւույթ եւ այդպիսին էր ոչ միայն 70-80-ական թթ., այլեւ այդպիսին է նաեւ այսօր»:

Ի նշանավորումն գիտնականի, հասարակական-քաղաքական գործի բազմաբեղուն եւ հայանպաստ գործունեության թեքեան մշակութային միության նախագահ Ռուբեն Միրզախանյանը հորելեարին հանձնեց ԹՄՄ բարձրագույն պարգևը՝ ադամանդակուու «Կրարատ» շքանշանը:

Օրն ուներ երկու բանախոս՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն Աշոտ Մելքոնյանը եւ «Ազգ» օրաթերթի գլխավոր խմբագիր Յակոբ Ավետիքյանը: «90-ական թթ. սկզբներին, երբ մենք ծեռք բերեցինք անկախություն, նշեց Աշոտ Մելքոնյանը, զարմանալիորեն տեղի ունեցաւ երեւույթներ, որոնց գնահատականն այսօր էլ չենք կարողանում լիարժեքորեն տալ: Այդ զարմանալի պրոեւսուլտականությունը թելադրում էր այրել Ռաֆայելին:

Մեզանում մարդիկ կային, որոնք ոչ միայն փորձում էին Յայաստանի խորիրդային ժամանակաշրջանը մոռացության տալ, այլեւ դա համարում էին վայրէցի մի ժամանակաշրջան, երբ իրականում ուղիղ հակառակն էր: Բարեբախտաբար, ժամանակն ամեն ինչ դնում է իր տեղը,

Հոգևոր Արքայի առաջարկելութեան համար պատճենաթուղթ

Եւ այսօր գալիս են իրական գնահատականները: Եվ այսօր ժամանակի մեջ եղած հասարակական-քաղաքական գործիչների ճշմարիտ գնահատականն է տրվում: Աշոտ Սելզոնյանն ուրախությամբ Նշում է, որ դրա վկայությունն է նաեւ մեծարանքն այնպիսի խոշոր գործի, որպիսին Կարլեն Դալլարյանն է:

Կարլեն Դալլարյանն իր ժամանակի ճշմարիտ տարեգիրը լինելով գրել է հայության ամենատարբեր ոլորտների մասին, որոնց թվում նաեւ Յայ առաքելական եկեղեցու մասին: Ու բնավ պատահական չէր, որ հորեցարին իր ողջունի գիրն էր ուղարկել նաեւ Ամենայն հայոց կաթողիկոս, Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ կաթողիկոսը, որն ընթերցեց Արարատյան թեմի առաջնորդական փոխանորդ Նավասարդ եպս. Կճոյանը:

«Ազգ» թերթի գլխավոր խմբագիր Յակոբ Ավետիքյանը վերիիշեց 60-70-ական թթ., երբ Յայաստանում անմատչելիների կամ «կիսաստվածների» շարքում նշվում էր նաեւ Կարլեն Դալլարյանի անունը, մարդ, որը կարողանում էր շատ բան որոշել: «Հետո եկան մեր անկախության տարիները, ասաց Յակոբ Ավետիքյանը, երբ «կիսաստվածներից» շատերը դարձան շատ հասարակ մարդիկ, բայց իսկական առումով: Այդ շատերից շատերին հանդիպելիս զարմանում էիր, որ նրանք այդքան մեծ պաշտոններ, աթոռներ, անուն են ունեցել (այդ թվում՝ ակադեմիկոսներ), բայց նրանց հոդվածները մի քանի անգամ էին սրբագրվում մեր խմբագրությունում: Բացառություններից մեկը Կարլեն Դալլարյանն էր, որ միշտ մնաց այն հեղինակության տերը, որը սկզբից եւեր իրեն դրսեւրել էր որպես բացահի գրագետ մարդ, հասարակական լայսախոհ գործիչ, խորաթափանց մտածող: Այդ քերից մեկը՝ Կարլեն Դալլարյանը ճշմարիտ հայ մարդ մնաց, որովհետեւ նա եռթայմբ հայրենասեր է, եռթայմբ պետականամետ է, մտավորական եւ ազգային մարդ: Եվ այս հատկանիշների լավագույն բանաձեռողը դարձյալ ինքն է եղել՝ իր հուշագրության մեջ ասելով, որ կան հայ կոմունիստներ եւ կան կոմունիստ հայեր: Ինքը հայ կոմունիստ է, այս կոմունիստներից, ովքեր այս երկիրն են շենացրել, զարգարել, ստեղծել իսկապես պետություն: Ես զարմանում եմ, որ այս կազմակերպությունները, որոնք տարիներ, տասնամյակներ շարունակ պայքարել են Խորհրդային Յայաստանի դեմ եւ այսօր իշխանության մաս են կազմում, վայելում այս երկիրը, չեն խոստովանել, որ սխալ են արել՝ միայն քննադատելով, միայն փնտվելով մեր 2-րդ հանրապետությունը»:

Յորելյարի մասին խոսք ասելու ցանկությունը մեծ էր, ողջունի հսուքով հանդես եկան շատերը, որոնց շարքում գրող Անահիտ Սահինյանը, գրականագետներ Ազատ Եղիազարյանն ու Սուրեն Դանիելյանը, ակադեմիկոս Վաղիմիր Բարիսուդարյանը, Աճառյան համալսարանի ռեկտոր Ավագ Խաչատրյանը, սփյուռքագետ Եղվարդ Սելզոնյանը եւ ուրիշներ:

Անշուշտ, խոսեց նաեւ հորելյարը, որը մասնավորաբար ասաց. «Քապարտությամբ եմ ասում, որ մասնակիցն եմ եղել Յայաստանի երկրորդ հանրապետության կառուցմանն ու հզրացմանը: Այս

շրջանն էր, որ ստեղծեց մեզ համար ազգային արժեքները համամարդկային արժեքների հետ գնահատելու կարողություն եւ շրջադարձ դեպի Ներկան: Թող որեւէ մեկը երեք չմտածի, որ Ներկան ստեղծվեց դատարկ հոյի վրա: Դժբախտաբար այդպիսի շատերը կան: Մենք ունենք մի ող պաղլամենտ, որի անդամների մի մասը, մանավանդ մեկ շրջան առաջ, կարծում էր, թե հայ ժողովրդի պատմությունը սկսվում է իրենց ծննդյան օրից կամ այս պահից, երբ իրենք դարձան Ազգային ժողովի պատգամավոր: Ո՞չ: Յայ ժողովրդի պատմությունն ամբողջական շղթա է, եւ այդ շղթայի մեջ խիստ կարեւոր է գնահատել 3 օղակները՝ առաջին հանրապետություն, երկրորդ հանրապետություն, երրորդ հանրապետություն, ոչ թե իբրեւ մեկը մյուսին ընդդիմախոս կամ թշնամի, այլ նույն շենքի տարբեր շարքերը: Սա է հայոց պետականության գաղափարը, փիլիսոփայությունը: Ուզում եմ հավատալ, որ մեր այսօրվա իշխանությունները նույնպես ճիշտ կգնահատեն հայոց պետականության ճշմարիտ արժեքը»:

Յայոց պետականության կառուցումը պետք է լինի հասարակական-քաղաքական բոլոր ուժերի գերագույն նպատակը, այս ուժերի, որի Ներկայացուցիչն է Կարլեն Դալլարյանը, որը, թեկուզ ուշացումով, բայց մեծարվեց: Մեծարվեց առայժմ թեքեյան կենտրոնում թեքեյան մշակութային միության նախաձեռնությամբ:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ԿԱՐԻԿԵՒ ԳԱԼՈՒՏՅԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ 150 ՏԱՐԵԿԱՆ Ե

Սեպտեմբերի 2-9-ը Եգիպտահայությունը մեծ շուրջով տուներու է գաղութի մշակութային-ընկերային կյանքում մեծ ավանդ ներդրած կրթական այդ հիանալի օջախի հիմնադրման 150-ամյա հոբելյանը:

Այդ տոնակատարությանը մասնակցելու են մեծ թվով հայեր, հիմնականում այդ վարժարանի շրջանավարտներ, սաներ, որոնք Եգիպտոսում են կամ ճակատագրի բերումով սփռված են աշխարհի չորս ծագերը: Չնայած այս հանգամանքին, որ 19-րդ դարասկզբին Եգիպտահայությունը նորացել էր, այսուամենայիկ անհրաժեշտություն էր դարձել հայերի ազգապահանման հարցի լուծումը: Ուրեմն, պետք էր հայկական եկեղեցիներին կից դպրոցներ ստեղծել: Այս հույժ կարեւոր մտահացումն իրականացնելու համար անհրաժեշտ էր նյութական գգալի միջոցների ներդրում: Հենց այստեղ են հրապարակ իշխում մեծահարուստներ, որոնք ոչ մի միջոց չեն ինչպատճեն այդ նպատակի համար: Դրանցից շատերը հետագայում կոչվեցին Ազգային բարերարներ: Ալեքսանդրիայում Ս. Պողոս-Պետրոս Եկեղեցուն կից ստեղծվեց Արամյան դպրատունը, որի հենքի վրա 19-րդ դարի կեսերին Պողոս ԲԵ Յուսուֆյանի բարերարությամբ կառուցվեց մինչեւ օրս գործող Պողոսյան ազգային վարժարանը: Այս վարժարանում են պաշտոնավարել անվանի շատ մտավորականներ, որոնցից երկուսը շատ են հարազատ հայաստանաբնակ հայերին՝ Նիկոլ Աղբայանը եւ Լեւոն Շանթը:

Հույս Կրիկոր Առաքելյան

Իսկ Կահիրեում Ս. Աստվածածին Եկեղեցուն կից 1828-ին ստեղծվում է Եղիազարյան դպրատունը՝ կառուցված Եղիազարյան եղայրների բարերարությամբ:

Դետագյում 1854-ին, դպրատունը փոխադրվում է մի այլ թաղամաս եւ տեղավորվում Կարապետ աղա Գալուստյանի բարերարությամբ կառուցված բարետնե եւ Երկիարկանի շենքում: Դպրատունը, ի հիշատակ պատմահայր Մովսես Խորենացու, վերանվանվում է «Խորենյան վարժարան»:

Ո՞վ էր Կարապետ աղա Գալուստյանը: Կարապետ Յանձմյանը ծնվել է Վանում 1790-ին, Տեր Գալուստ քահանայի ընտանիքում: 1820-ին գաղթում են Կահիրե: Դոր մահից հետո ծննդավայրում ընդունված ավանդության համաձայն որդին վերցնում է հոր անունը եւ դառնում Կարապետ Տեր-Գալուստյան: Նա ծավալում է շատ բեղմանակոր գործունեություն եւ շուտով մեծ ճանաչում է գտնում պետական լայն շրջանակներում. արժանանում է «աղա» տիտղոսի: 1848-ին Եգիպտոսի փոխարքա Հշիսան Աբբաս Շիլմի բեի առաջարկությամբ նշանակվում է Եգիպտոսի գանձարանի (փողերանցի) տնօրեն: Մեծ ձեռներեցությամբ պաշտոնավարում է մինչեւ 1854 թվականը: Խորենյան վարժարանին (իմա՝ ազգին) է կտակում մեծ արժողությամբ անշարժ գույք եւ դրամ: Մահացել է 1864-ին:

Մի այլ մեծ բարերարի՝ անվանի քաղաքական-պետական գործիչ, Եգիպտոսի վարչապետ եւ Յայկական բարեգործական ընդհանուր միության հիմնադիր (1906 թ.) Պողոս փաշա Նուբարի ծախսերով Կահիրեում հոլամաս է գևում, կառուցվում են 2 հարակից շենքեր՝ տղաների եւ աղջկների վարժարանները 1854 թվին հիմնարված արդեն գործող Խորենյան վարժարանի հենքի վրա: Մանկապարտեզի շենքի հետ ստեղծվում է կրթական մի ամբողջ համալիր, որի բացումը տեղի է ունենում 1907-ին, Կարապետ աղա Գալուստի (յան) մահվանից շուրջ 40 տարի հետո: Բացման արարողությանը անձամբ ներկա է լինում Պողոս փաշա Նուբարը եւ իր ազնվագույն կինը՝ Մարի Նուբարը, որի անունը Երեւանաբնակ շատ հայերի ծանոթ է Աբրույսի արձանի հարեւանությամբ գտնվող Մարի-Նուբար ակնաբուժարանի միջոցով:

Ներկաների միահամուռ որոշումով կրթական այդ նորակառուց համալիրը կոչվում է Գալուստյան ազգային վարժարան (ԳՎԿ):

Ուսումնառությունն այնտեղ սկսվում է 4 տարեկանից՝ մանկապարտեզից: Այս կազմված է 4 դասարաններից շատ պատկերավոր եւ իմաստալից անվանումներով. բոլորը, կոկոն, ծաղիկ, նախապատրաստական: Այսուհետեւ նախակրթարան 1-5 դասարաններով, բարձրագույն նախակրթարան 6-8 դասարաններով եւ Երկրորդական (միջնակարգ) 9 եւ 10 դասարաններով: 9-րդ բացվեց 1945-46 ուստարում: Տողերիս հեղինակը 1947-ին ԳՎԿ-ի 10-րդ դասարանն ավարտած առաջին 5 աշակերտներից մեկն է:

Իր գոյության ընթացքում ԳՎԿ-ը հազարավոր սաներ եւ շրջանավարտներ է տվել, որոնք կյանք են մտել որպես լիարժեք հայորդիներ: Շրջանավարտներից հիշատակներ հայաստանակ բազում հայերին քաշածանոր

երկուսին: Սոցիալստական աշխատանքի հերոս (միակ հայրենադարձը), ԽՍՀՄ եւ ՀՍԽՀ ժողովրդական արտիստուիթի, պետական մրցանակների դափնեկիր Գոհար (Խաչատրյան) Գասպարյանը եւ Փրանսահայ աշխարհահեռակ գեղանկարիչ Գառնիկ Չուլումյանը (Գալոցու):

Կարապետ աղա Գալուստի (յան) Նկատմամբ գոյություն ունեցող շատ մեծ հարգանքի նշան է նաեւ Եգիպտահայ մեծանուն գեղանկարիչ եւ քանդակագործ Օնիկ Ավետիսյանի ստեղծած կիսանդրին, որը 1935-ին տեղադրվել է ԳՎԿ-ի բակում: Բացման արարողությանը ներկա է Եղել Յայրապետական պատվիրակ Գարեգին արքայիսկոպոս Խովսեփյանցը:

ԳՎԿ-ն ունեցել է իր ուսումնական խորհուրդը, Տիկնանց խնամակալությունը, դարմանատունը, գրադարանը, լավ կահավորված ուսումնական աշխատանոցները, մարզադաշտն իր բոլոր հարմարություններով, ճաշարանը, խոհանոցը եւ այլն, որոնցից, ավաղ, այժմ մնացել է միայն մի փոքր հատվածը: 1980-ի վերջերին մի խումբ գալուստյանցիներ միտք են հղանում կազմակերպելու համաշխարհային հավաք: Այն պիտի հնարավորություն ստեղծեր տարբեր սերունդների ներկայացուցիչների մի քանի օրով մեկտեղվել, իրար տեսնել, իրարից կարոտ առնել: Այդ մտահացումն իրականություն դարձավ: Առաջին համաշխարհային հավաքը կայացավ 1991-ին Կանադայում: Այդ անսախանեալ միջոցառման արձանագրած տպագորիչ հաջողությունը խթան հանդիսացավ մեծացնելու հանրահավաքի շրջանակները: Գալուստյանցիներին միացան նաեւ նուբարյանցիները: Միացյալ հավաքը տեղի ունեցավ 1993-ին ԱՄՆ-ում: 1995-ին Ավստրալիայում կայացած հերթական հավաքին միացել էին նաեւ պողոսյանցիները: Կրդեն այս գեղեցիկ եւ անսախանեալ միջոցառման ստացել է ավանդական բնույթ. համաշխարհային համահավաքը հրավիրվում է երկու տարին մեկ:

1999-ին Մոնրեալում կայացած հերթական հավաքին ընդունվեց շատ ճիշտ եւ տեղին որոշում. հերթական հաջորդ հավաքը հրավիրվել Երեւանում: 2003-ին կայացած այս հավաքը իր եռթյամբ տարբերվեց նախորդներից: Այն տեղի ունեցավ Արարատի, Ս. Եջմիածնի եւ Ս. Մեսրոպի շիրիմի հովանու ներքո: Պետք է նշել, որ յուրաքանչյուր հավաքի ընթացքում կուկի մի գումար է հավաքվում, որը նվիրաբերվում է մայր հայութեանցին որոշակի նպատակի հրականացման համար, օրինակ, դպրոցների վերանորոգում, հիվանդանոցի օգնություն՝ ժամանակակից սարքավորումներ ծեռք բերելով եւ այլն:

ԳՎԿ-ի հիմնադրման 150-ամյա հորեւյան տոնակատարությունը բարոյական ակտ է:

ՆՈՐԱՅՐ ԲԵՅԼԵՐՅԱՆ, ՀՀ բարձրագույն դպրոցի
վաստակավոր գործիչ, քիմիական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր, ՊՅ-ի ֆիզիկական եւ կոլորդների
քիմիայի ամբիոնի վարիչ